

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ IGARAB-ԿՍԻ ԵՐԿԻՐԸ ԵՎ ARDA ՔԱՂԱՔԸ

Ն. Գ. ԵՆԳԻՐԱՐՅԱՆ

Խորխորյան տարեգրության կրկնագրի CICH, 112 A1<sup>1</sup> տեքստի 15—21 տողերի համար Գ. Ա. Մելիքիշվիլին ուրարտական արձանագրությունների իր ժողովածուում առաջարկել է հետևյալ գիտական տառադարձումը.

15. [L]uḫu-ra-a-di-ni-li
16. ṽi-e-li-du-bi ṽi-la-di
17. ṽDi-i-[a]-ṽi-ḫi-[n]i-[e]-[d]i
18. ṽa(?)-ri-bi e-ri-da-bi
19. [k]a-ū-ki gu-nu-ši-ni-ṽe
20. [...] i ga ra ab ḫu bi ṽe
21. [...] a(?) [...] D(?) ṽi [...] d[a] a ka ṽi<sup>2</sup>

Արձանագրության նույն հատվածի համար մի փոքր այլ տառադարձում է առաջարկում ավստրիացի հետազոտող Ֆ. Վ. Քյոնիգը.

15. ṽLuḫu-ra-a-di-ni-li
16. ṽi-e-li-du-bi ṽi-la-di
17. ṽDi-i-a-ū-ḫi-ni-e-di
18. a?-ri-bi e-gi-da-bi
19. [k]a-ū-ki gu-nu-ši-ni-e
20. [me]?-i ga-ra-ab ḫu?-bi?-ni-e
21. e-'a a[r]-da-a-ka-i<sup>3</sup>

Խորխորյան տարեգրության կրկնագրի վերը բերված հատվածում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 20-րդ և 21-րդ տողերը: Նախ 20-րդ տողի մասին, որ Գ. Ա. Մելիքիշվիլին ընթերցում է [...] i ga ra ab ḫu bi e, իսկ Ֆ. Վ. Քյոնիգը՝ [me]?-i ga-ra-ab ḫu?-bi?-ni-e.

Մեր կարծիքով, Ֆ. Վ. Քյոնիգի [me]?-i վերականգնումը խիստ արհեստական է և զուրկ որևէ հիմքից: Ինչ վերաբերում է Գ. Ա. Մելիքիշվիլու ընթերցմանը, ապա այստեղ հիմնականում ամեն ինչ իր տեղում է: Միայն իբրև մի ամբողջություն չի դիտվում igarab-ը, մանավանդ, որ հաջորդ ḫuble-ն (լուսանկարի վրա՝ ḫu-bi-ni-e / ուրարտական սեպագրերից հայտնի «հովիտ» բառն է:

Հարցի այդորինակ մեկնաբանման դեպքում կասկած չի հարուցում KUR «երկիր» դետերմինատիվի առկայությունը 20-րդ տողի սկզբին<sup>4</sup> I-ga-ra-ab ḫu-bi-ni-e, այսինքն՝ «Իգարաբ<sup>4</sup> հովտի երկիր»: Վանկային (հնչյունական) անցումները ևս խոսում են KUR Igarab ընթերցման օգտին:


<sup>1</sup> „Corpus Inscriptionum Chaldicarum“, I, Berlin und Leipzig, 1928, աղյուսակ XXVI, 112 A1.

<sup>2</sup> Գ. Ա. Мелкишивили, Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН), 128 A1:

<sup>3</sup> Fr. W. König, Handbuch der chaldäischen Inschriften, II, Graz, 1957, էջ 102:

<sup>4</sup> Կարդա՝ Իյարաբ. հմտ., թերևս, Իգա(նի) և Իյա(նի):

Վերահիշյալ ընթերցումը հիմնավորվում է ուրարտական այլ արձանագրությունների տվյալներով. «հովտային երկիր» է ոչ միայն տվյալ դեպքում մեղ հետաքրքրող <sup>KUR</sup>Igarab-ḫubi-ն, այլև ուրարտական այլ տերիտորիաների <sup>1</sup>Menuainle-ḫubi-ն<sup>5</sup>, <sup>KUR</sup>Niribai-ḫubi-ն<sup>6</sup>, <sup>KUR</sup>Ašqajal-ḫubi-ն (ասրբերակ՝ <sup>KUR</sup>Aškaḫal-ḫubi)<sup>7</sup>, <sup>KUR</sup>Tuarašinlei-ḫubi-ն<sup>8</sup>, <sup>KUR</sup>Quarlini-ḫubi-ն (= <sup>1</sup>Rusainle-ḫubi-ն)<sup>9</sup>:



Այժմ երկու խոսք մեղ հետաքրքրող արձանագրության 21-րդ տողի մասին, ուր, ինչպես հայտնի է, Գ. Ա. Մելիքիշվիլին ընթերցում է [...]a(?) [...] D(?) s[...] d[a] a ka [i], իսկ Ֆ. Վ. Բյոնիգլը՝ e-'a a[r]-da-a-ka-i:

<sup>5</sup> YKH, 59, տող 5—6:

<sup>6</sup> Նույն տեղում, 127, II, տող 13:

<sup>7</sup> Նույն տեղում, 127, IV, տող 54—128 B2, տող 25:

<sup>8</sup> Նույն տեղում, 127, V, տող 12:

<sup>9</sup> Նույն տեղում, 281, տող 6, 16—17:

Տողի սկզբին պահպանվել են URU «քաղաք» դետերմինատիվի վերջին երկու ուղղահայաց սեպերը, որոնք անուշադրության են մատնված Գ. Ա. Մե-լիքիշվիլու կողմից և սխալմամբ դիտված են իբրև e Ֆ. Վ. Քյոնիգի կողմից։ Այնուհետև, Գ. Ա. Մե-լիքիշվիլու ընթերցած D-ն 'a նշանի շարունակությունն է, դրա սկզբի ի-ին համընկնող մասի հետքերը հստակ երևում են արձանագրության լուսանկարի վրա, ուստի Ֆ. Վ. Քյոնիգի 'a ընթերցումը լիարժեք կովաններ ունի։ Այնուհետև, այն, ինչ Գ. Ա. Մե-լիքիշվիլին ընթերցել է §1, դա a[r] սեպախմբի սկիզբն է, որը իրավամբ ճշտել է Ֆ. Վ. Քյոնիգը։ 21-րդ տողի մնացած նշանների ընթերցմանը (da, a, ka, i) հետազոտողները համա-կարծիք են։

Եվ այսպես, արձանագրության 21-րդ տողի Գ. Ա. Մե-լիքիշվիլու ընթերցումը ոչ մի իմաստ չի արտահայտում, իսկ Ֆ. Վ. Քյոնիգին՝ առանձին դիպ-վածներում ունեցած ճիշտ եզրահանգումներով հանդերձ, դարձյալ ի վիճակի չէ տալու հարցի իրավացի լուծումը։ e-'a a[r]-da-a-ka-i (e'a-ն շաղկապ է «և», «ու») ընթերցումը բնագրի բովանդակությանը վերին աստիճանի ան-հասկանալի և խորթ է մնում։

Հետևաբար, իր տեղում դնելով մեր ընթերցած URU դետերմինատիվը, 21-րդ տողը կարելի է վերծանել այսպես՝ URU 'A-a[r]-da-a-ka-i<sup>10</sup> «Արդա-քաղաքի սուրճ»։

Այս քաղաքանվանը կից հանդես եկող -kai հետադրությունը ևս խոսում է մեր ընթերցման օգտին։ Ուրարտական արձանագրություններում kai-ին տեղանուններին կից հանդես է գալիս հաճախ։ Այսպես, օրինակ, URU Aḫiuni-kani<sup>11</sup>, URU Tumeiškini-kai<sup>12</sup>, KUR Artarapša-kaini<sup>13</sup>, URU Irdua-kai<sup>14</sup>, KUR Qil-bani-ka<sup>15</sup>։

Արգան, ակներևաբար, Իգարաբ-հովտի երկրի քաղաքներից է եղել և ուրարտացիների ու Իգարաբ հովտի երկրի (վերջին հաշվով՝ Դիաուխիի) ռազմական բախումներն, ըստ երևույթին, տեղի են ունեցել Արդա քաղաքի բնակատեղիի մատույցներում (բառացիորեն՝ «Արդայի առջև»)։

Այժմ անդրադառնանք վերը բերված տեքստի Գ. Ա. Մե-լիքիշվիլու թարգ-մանությանը՝ «...զինվորներ ես հավաքեցի, (և) զնացի Դիաուխիի դեմ, aribi ելավ իմ առջև (իմա՝ իմ դեմ) պատերազմով...»։

Հիշյալ թարգմանության մեջ մեզ համոզիչ չի թվում հատկապես 19-րդ տողի gunušinie բառի «պատերազմով» թարգմանությունը։ Մի այլ դեպ-քում Գ. Ա. Մե-լիքիշվիլին այդ նույն gunušinie բառը թարգմանում է «մար-տով»՝ ušadi KUR Artarmu [...] gunušinie su[idulubi] «Ձեռնարկեցի ես (արշավանք) դեպի Արտարմու երկիրը... մարտով ես ետ շարտեցի (նրանց)»<sup>16</sup>։

<sup>10</sup> Կարդա՝ Uarda (Varda)։ Կան փաստեր, որ ուրարտերենում 'a-ը հնչվել է ua (va), Հմմտ. D'A և D'Ua, D'Aruba(l)ni և D'Uarubani : H. B. А р у т ю н я н, Новые урартские надписи, Ереван, 1966, էջ 91, թան. 43։

<sup>11</sup> УКН. 62, հակառակ կողմ, տող 1։

<sup>12</sup> Նույն տեղում, 158, տող 11։

<sup>13</sup> Նույն տեղում, 276, հակառակ կողմ, տող 5։

<sup>14</sup> URU Irdua-kai ձևը հանդիպում է Սիսիանի շրջանից վերջերս հայտնաբերված Ար-գիշտի II-ի արձանագրության մեջ (հրատարակության է պատրաստում Ն. Վ. Հարությունյանը)։

<sup>15</sup> И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963, տեքստ 12, երեսի կողմ, տող 5։

<sup>16</sup> УКН, 127, I, տող 33—34։

Gunušinie բառի ոչ «պատերազմով», ոչ էլ «մարտով» թարգմանությունները, ինչպես երևում է, իրենց չեն արդարացնում: Եվ պատահական չէ, որ երկու դեպքում էլ չի երևում, թե ով է ելել ուրարտական թագավորի դեմ (բառացիորեն՝ առջև): Այս վերջին դեպքում Գ. Ա. Մելիքիշվիլին ինքն է զդում այդ պակասը և հորիսորյան տարեգրության առաջին սյունակին ստիպված հղում է 21-րդ ծանոթագրությունը, ուր լրացուցիչ բացատրում է, թե խոսքը թշնամու զորքերի մասին է:

Մեր կարծիքով, տեքստերը հստակ թելադրում են, որ gunušini(li) բառը բոլոր դեպքերում «զորք, մարտիկներ» իմաստն ունի. նույնիսկ եզակի գործածության դեպքում gunušini-ն դարձյալ հավաքական հոգնակիով պետք է ընկալել: Մի շարք այլ դեպքերում այդպես էլ ընկալում է LÜgunušini-ն կամ LÜMESgunušini-ն նաև ինքը՝ Գ. Ա. Մելիքիշվիլին<sup>17</sup>:

Ի դեպ հորիսորյան տարեգրության կրկնագրի մեր կողմից մեկնաբանվող հատվածին շատ նման է Սարգուրյան տարեգրության E սյունակի հատվածներից մեկը, ուր ասված է. ušadi KURPuḫadiedi šabi kauki gunušinie suidulubi ašubi parie URULibḫunie [...] <sup>18</sup> «արշավեցի Պուլուադի երկիրը, ելավ իմ առջև զորքը, ետ շարտեցի, հետապնդեցի մինչև Լիբլիունի քաղաքը»<sup>19</sup>:

Այսպիսով, վերը բերված նյութի հիման վրա, հորիսորյան տարեգրության կրկնագրի մեզ հետաքրքրող հատվածի համար անհրաժեշտ է առաջադրել հետևյալ դիտական տառադարձումը և թարգմանությունը.

15. [U]ḫu-ra-a-di-ni-il

16. [u-e-il-du-bi u-la-di

17. [ ] Di-i-!a]-!uḫi-!niḫ-e]-[d]i

18. [a(?)]-ri-bi e-ri-da-bi<sup>20</sup>

19. [k]a-ú-ki gu-nu-ši-ni-e]<sup>21</sup>

20. [KUR]<sup>22</sup> l-ga-ra-ab ḫu-bi-ni-e]<sup>23</sup>

21. [URU 'A-a[r]-da-a-ka-i

«Զինվորներ ժողովեցի, գնացի Դիաուխի դեմ. aribi ելավ իմ առջև զորքը Իգարաբ-հովտի՝ Արդա քաղաքի առջև»:

<sup>17</sup> УКН, 127, II, տող 36=128 А2, տող 21. 155А, տող 10, 20, 24, 27.

<sup>18</sup> УКН, 155 E=M. Tserethell, Die neuen haldischen Inschriften Königs Sardurs von Urartu, Heidelberg, 1928, էջ 16—17 (E, տող 8—11).

<sup>19</sup> Հմմտ. Գ. Ա. Մելիքիշվիլու թարգմանությունը՝ «Выступил я (в поход) на страну Пулуади. Пришло (войско врага) против меня (букв. передо мной) войной, отбросил я его, преследовал (?) до города Либлиуню».

<sup>20</sup> Իդուր է Ֆ. Վ. Քյունիգը այս բառը ընթերցում e-gi-da-bi. ri նշանի փոխարեն gi ընթերցելու ոչ մի հիմք չկա:

<sup>21</sup> Դժվար է համաձայնվել Ֆ. Վ. Քյունիգի հետ, երբ նա այստեղ e-ի փոխարեն ընթերցում է i. այդ նշանից պահանջվել են երկու հորիզոնական և հաջորդ ուղղահայաց սեպերը, որոնք, բնականաբար, հնարավոր չէ ընկալել որպես i: Անկասկած, տվյալ դեպքում իրավացի է Գ. Ա. Մելիքիշվիլին:

<sup>22</sup> Ուրարտական արձանագրությունների Կ. Ֆ. Լեման-Շաուպտի ժողովածուում զետեղված է ստամպի լուսանկարի վրա նշմարվում են KUR «երկիր» զետեղման տիպի հետքերը: Հետևաբար, Ֆ. Վ. Քյունիգի [me]?-i ga-ra-ab ընթերցումը մեր տեքստի համար ընդունելի չէ:

<sup>23</sup> Արձանագրության էստամպի լուսանկարի վրա բավականաչափ հստակ ընթերցվում է ḫu-bi-ni-e], ուստի հասկանալի չէ ու նշանի անտեղումը Գ. Ա. Մելիքիշվիլու կողմից կամ թե ḫu և bi նշանները կասկածի տակ առնելը Ֆ. Վ. Քյունիգի կողմից:

Տեքստից պարզ երևում է, որ gunušīnie «զորք» թարգմանությունը շատ բնական է և այն (այդ դորքը) պատկանել է Իգարաբ-Հովտին (Իգարաբ-խուբիին), այլապես վերջինս արտահայտված չէր լինի սեռական հոլովով (gunušīnie [KUR]Igarab-ḫubie):

Վերջում նշենք, որ հարցի առաջարկված մեկնաբանության դեպքում Ուրարտուի տեղագրությունը հարստանում է նոր փաստերով՝ Իգարաբ-Հովտի երկրով և նրա Արդա քաղաքով: Իգարաբ-խուբին, ամենայն հավանականությամբ, ընկած է եղել հանրահայտ Դիաուխի (Ճորոխի ավազանում և հարակից տարածքներում)<sup>24</sup> մոտակայքում, գուցե և նրա կազմում, քանի որ Իգարաբ-Հովտի զորքերը, ըստ տեքստի, փաստորեն օգնության են հասել Դիաուխիին:

## УРАРТСКАЯ СТРАНА IGARAB-ḪUBI И ГОРОД ARDA

Н. Г. ЕНГИБАРЯН

### Резюме

Большая стела с клинообразной надписью, найденная в конце прошлого столетия в церкви Сурб-Сахак в Ване, уже давно привлекала внимание исследователей урартской эпиграфики. В свое время было установлено, что она явилась дубликатом недостающего отрывка основного текста Хорхорской летописи и издана в корпусах урартских надписей, составленных К. Ф. Леманн-Гауптом, Г. А. Меликишвили и Ф. В. Кенигом.

Несмотря на это, при чтении и интерпретации указанной надписи, на наш взгляд, вне поля зрения специалистов оказались некоторые весьма существенные данные строк 20—21. Согласно фотоснимку эстампажа, опубликованному в «Corpus Inscriptionum Chaldaicarum» (табл. XXVI, надпись 112A1), предлагается следующее чтение топонимических названий <sup>KUR</sup>Igarab ḫubi (страна Игараб-долины) и <sup>URU</sup>'Arda (город 'Арда).

По данным надписи, страну Игараб-хуби с ее городом 'Арда-Уарда следует локализовать, по-видимому, по соседству с известным племенным объединением Диаухи, т. е. в долине Чороха и на сопредельных территориях. Не исключена также возможность, что Игараб-хуби являлась неотъемлемой частью Диаухи.

<sup>24</sup> Г. А. Меликишвили, Диаухи («Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1950, № 4, стр. 26—42); И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (ВДИ, 1951, № 2, տերյւմ 10, ծան. 45, տերյւմ 27, ծան. 13); Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 31. Н. В. Арутюнян, Бнай-ишл (Урарту), Ереван, 1970, стр. 13, 400.